ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

/հեղինակ՝ դասվար Աննա Պարսամյան/

Շաբաթական 2 ժամ, տարեկան՝ 68

Բացատրագիր

Ուսումնական խմբակի "Խոսքի զարգացումն հմտություններ" դասընթացի աշխատանքային ծրագիրը նախատեսված է տարրական դասարանների համար։

Ծրագիրն ունի և ճանաչողական, և իմացական ուղղվածություն։ Այն թույլ է տալիս տարրական դպրոցի աշակերտներին սովորեցնել մայրենի լեզվի բառերի, խոսքի հրաշալի և անծայրածիր աշխարհը։ Այն ձևավորում է սովորողների աշխարհայացքը. Ծրագրի բովանդակության համար հիմք են հանդիսանում ազգային ակունքներն ու մանկական ընթերցանության լավագույն հեղինակների ստեղծագործությունները ։ Պարապմունքներն ուղղված են աշակերտների մտավոր գործունեության զարգացմանը և բանավոր խոսքի ձևավորմանը, տարբեր իրավիճակներում ճիշտ կողմնորոշմանը։ Պլանավորված է դասերն անցկացնել խաղային մեթոդներով և տարիքին համապատասխան ՏՀՏ գործիքներով, երաժշտական դադարներով, բեմականացումներով,որն առավել հետաքրքիր և արդյունավետ կլինի։

Դասընթացի ուսումնասիրության վերջնարդյունքները ՝

Սովորողները կկարողանան՝

գիտակցել խոսքի դերի կարևորությունը շրջապատում,

արտահայտել սեփական զգացմունքները ճիշտ և գրագետ ձևով,

կունենան խոսքի զարգացման դասընթացի ուսումնասիրության նկատմամբ հետաքրքրություն,

ընկալել խոսքի գեղեցկությունն ու արտահայտչականությունը, ձգտել սեփական խոսքի կատարելագործմանը,

իրականացնել ուսումնական առաջադրանքների կատարման համար անհրաժեշտ տեղեկատվության որոնում ' օգտագործելով ՏՀՏ գործիքներ,

Կարևոր տեղեկություններ դուրս բերել ընթերցված տեքստերից, ընդգծել դուր եկած հատվածները,

Կազմել երկխոսություններ, օգտագործել առօրյայում,

մասնակցել խմբային աշխատանքներին՝ ըստ սահմանված կանոնների,

լինել ուշադիր սեփական խոսքի նկատմամբ,

Դասընթացի ավարտին սովորողները պետք է իմանան՝

լեզվի պատկերային արտահայտչամիջոցներ. փոխաբերություններ, համեմատություններ

անձնավորում, խոսքի ոճեր՝ խոսակցական և գրքային,տարբերել դրանք և կիրառել ճիշտ միջավայրում,

աշխատել իրենց տարիքին համապատասխան ՏՀՏ գործիքներով:

Հ/Հ	Ուսուցանվող նյութ	Ժամա-քանակ	Ակնկալվող վերջնարդյունքներ
1	**Մարդը և իրեն շրջապատող միջավայրը:**	1	Կարողանա ճիշտ հաղորդակցվել հասակակիցների և մեծերի հետ:
2	Շփման կարևորությունը մարդու կյանքում:	1	Պատմի իր և իր շրջապատի մարդկանց փոխհարաբերությունների մասին:
3	Սիրո դրսևորումները:	1	Կարողանա դիտել նկարները և պատասխանել. «Ի՞նչ կզգայիր նկարների հերոսների փոխարեն»:
4	Երբ եմ ուրախանում, երբ եմ տխրում:		Կարողանա կիսել ուրախությունը և տխրությունը :
5	Երբ ենք դիմում օգնության:	1	Կարողանա խնդրել օգնություն կամ առաջարկել օգնություն :

6	Խոսքային գործունեություն դրսևորումները։	1	Կիմանա, որ խոսքը հանդիսանում է մարդկանց գործունեության կազմակերպման և պլանավորման միջոց
7	Խոսքային գործունեության դրսևորումները։	1	համապատասխան խոսքային իրավիճակներումկստեղծեն տարբեր ոճերով ոչ՝ ծավալուն կապակցված խոսք՝ զարգացնելով ազատ ինքնաարտահայտման կարողություններ
8	Խոսքային գործունեության դրսևորումները։	1	կարողանա խոսքն օգտագործել տարբեր նպատակների համար (համոզել, մխիթարել, շնորհավորել, արդարանալ և այլն)։
9	Հաղորդակցության տեսակները և ձևերը։		կիմանան, որ բանավոր կարելի է հաղորդակցվել խոսքային և ոչ խոսքային միջոցներով
10	Ինչպես և երբ օգտագործել դիմախաղը։	1	կսովորեն թե՛ խոսքային, թե՛ ոչ խոսքային միջոցներով հաղորդակցվելիս ճիշտ օգտագործելդիմախաղը, շարժուձևը, կճանաչեն դրանց գործածության ձևերը
11	Սովորածի ճիշտ արտահայտում։	1	կարողանան ունկնդրած ստեղծագործություններին արձագանքել խոսքային (պլանի կազմում, բովանդակության փոխադրում, ստեղծագործական շարադրանք) և ոչ խոսքային միջոցներով։

12	Ինքնարտահայտման դրսևորումներ։	1	զարգացնեն ազատ ինքնարտահայտվելու կարողությունները Խոսքը կօգտագործեն տարբեր նպատակների համար (համոզել, մխիթարել, արդարանալ, զվարճանալ,...)
13	Խոսքային վարքաձևեր. Ներողություն, խնդրանք, ողջույն, շնորհակալություն	1	Կամրակայեն բարեկիրթ խոսքի, վարքի հմտություններ Ներկայացված դրվագներում կկարողանան տարբերել բարեկիրթ խոսքը ոչ բարեկիրթ հաղորդակցությունից
14	Խոսքային վարքաձևեր. Ներողություն, խնդրանք, ողջույն, շնորհակալություն	1	Կամրակայեն բարեկիրթ խոսքի, վարքի հմտությունները Կընտրեն որևէ դրվագ և կներկայացնեն դերերով՝ օգտագործելով բարեկիրթ խոսքային վարքագծեր
15	Առօրյա, մտերմիկ, պաշտոնական հաղորդակցություն	1	Կամրակայեն բարեկիրթ խոսքային վարքագծեր։
16	Առօրյա, մտերմիկ, պաշտոնական հաղորդակցություն	1	Կարողանա ճիշտ հաղորդակցվել ընտանիքի անդամների, շրջապատի մարդկանց և անծանոթների հետ
17	Ինչպես ճիշտ դրսևորել միջավայրում։	1	Կարողանա ճիշտ շփվել հասակակիցների և մեծահասակների հետ
18	Միջանձնային, խմբային կամ զանգվածային հաղորդակցություն	1	Կիմանան , թե ինչպես են շփվում մեկի հետ, մի քանիսի հետ, շատ-շատերի հետ

19	Բանավոր և գրավոր հաղորդակցում:	1	կիմանան, որ հաղորդակցումը լինում է բանավորև գրավոր կգտնեն ընդհանրություններ և տարբերություններբանավոր և գրավոր խոսքի միջև
20	Հաղորդակցման ձևերը՝ բանավոր և գրավոր	1	կկարողանան բանավոր և գրավոր շարադրել իրենց մտքերը, տպավորությունները տեքստի, հերոսների, դեպքերի մասին:
21	Առանց խոսքի: Ցուցանակներ	1	Կարողանան պատրաստել հետաքրքիր, գրավիչ ցուցանակներ, որոնք կգրավեն բնակիչների և հյուրերի ուշադրությունը:
22	Առանց խոսքի: Պաստառներ	1	Կարողանան պատրաստել հետաքրքիր, գրավիչ պաստառներ, որոնք կգրավեն սովորողների և ուսուցիչների ուշադրությունը:
23	Լսել և խոսել ժամանակին, ճիշտ տեղում:	1	Կարողանան բանավոր հաղորդակցվելիս ճիշտ գիտակցել առոգանության, ժեստի, դիմախաղի դերը: Խոսել առանց դիմացինին ընդհատելու:
24	Բանավոր հաղորդակցում (խոսել, լսել)	1	կիմանան, թե ինչպիսին պետք է լինի ունկնդրի պահվածքը: կկարողանան լսել, հասկանալ ուսուցչի, հասակակիցների խոսքը, ռադիոհաղորդումները, ձայնագրությունները ,արձագանքել, անհրաժեշտության դեպքում լրացուցիչ տեղեկատվություն հաղորդել:
25	Բանավոր հաղորդակցում (գտնել բառեր՝ իրավիճակին համապատասխան)	1	Կարողանան դիտել նկարները, իրենց պատկերացնեն նկարի հերոսների փոխարեն և իրավիճակին

			համապատասխան բառեր գտնեն
26	Բանավոր հաղորդակցում (գտնել բառեր՝ իրավիճակին համապատասխան)	1	Կարողանան դիտել նկարները, իրենց պատկերացնեն նկարի հերոսների փոխարեն և իրավիճակին համապատասխան բառեր գտնեն
27	Համապատասխան դերեր ընտանիքում	1	Իմանա՝ Ով եմ ես ընտանիքում։ Ով եմ ես հարազատների շրջապատում։
28	Համապատասխան դերեր դպրոցում	1	Իմանա՝ Ով եմ ես դպրոցում։ Ով եմ ես բակում։ Ով եմ ես շրջապատում։
29	Քո հաղորդակցական դերերը (Ո՞վ, ու՞մ)	1	1.Կարողանան դիտել նկարները և որոշել , թե՝ Ով է խոսում (հաղորդում) Ով է լսում (ստանում) Ով է գրում (հաղորդում) Ով է կարդում (ստանում) 2.Ընդգծեն համապատասխան սլաքը
30	Ուշադրության կենտրոնացում։	1	Կարողանան գտնել,թե որ նկարներում են հերոսներն ուշադիր լսում և ներկել այդ նկարների աստղերը։
31	Բարեկիրթ շփում, հաղորդակցություն	1	Իմանալ բարեկիրթ , սիրալիր բառեր, բառակապակցություններ
32	«Ողջույն, բարև». ճիշտ մոտեցում	1	Իմանալ բարեկիրթ , սիրալիր բառեր, բառակապակցություններ
33	Բարեկիրթ, քաղաքավարի «Ողջույն, բարև» (ու՞մ)	1	Կամրակայեն բարեկիրթ խոսքի, վարքի հմտություններ

34	Բարեկիրթ, քաղաքավարի «Ողջույն, բարև» (ե՞րբ)	1	Կարողանան տարբերակել և ասել , թե ինչպես են ողջունում օրվա տարբեր ժամերին։	
35	Շփում կենդանիների հետ	1	Կսովորեն կենդանիների արձակած ձայները։	
36	Ողջույնի և հրաժեշտի խոսքեր	1	Կարողանան խաղալ «Ողջունիր և հրաժեշտ տուր» խաղը։	
37	Բարեկիրթ, ոչ բարեկիրթ	1	.կամրակայեն բարեկիրթ խոսքի, բարեկիրթ վարքի հմտությունները .ներկայացված դրվագներում կկարողանան տարբերել բարեկիրթ խոսքը ոչ բարեկիրթ հաղորդակցումից	
38	Բարեկիրթ, ոչ բարեկիրթ	1	իրավիճակին համապատասխան փոքրիկ բեմականացումների միջոցով առավել կոնկրետ ևտեսանելի կներկայացնեն բարեկիրթ հաղորդակցումը։	
38	Խնդրե՞լ, թե՞ պահանջել	1	Կարողանան՝ խնդրանքը դարձնել հրաման կամ պահանջ հրամանը դարձնել խնդրանք։	
39	Վարքագծի կանոններ	1	Կարողանան տրված արգելող ցուցանակները («Չաղմկել» , «Ձեռք չտալ», «Չվազվզել») դնել համապատասխան նկարի մոտ։	
40	Մեղմ և խիստ արգելքներ	1	Կարողանան որոշել մեղմ և խիստ արգելքներ։ Կարողանան կազմել արգելող և թույլատրող ցուցանակներ։	

41	Հրավիրատոմսի պատրաստում	1	Կարողանան գրել հետաքրքիր հրավիրատոմս։	
42	« Մենախոսություն և երկխոսություն»	1	Կսովորեն տարբեր խոսքային իրավիճակներում մենախոսութ-յունների և երկխոսությունների միջոցով ասելիքը ներկայացնել։	
43	Մենախոսություն, դրա առանձնահատկությունները	1	Կսովորեն մենախոսել՝ դրսևորելով արտասանական կարողությունները ։ Կպատրաստեն փոքրիկ ելույթ՝ իրենց հետաքրքրող թեմայով։	
44	Մենախոսություն, դրա առանձնահատկությունները	1	Կսովորեն հաղորդակցվելիս ճիշտ օգտագործել դիմախաղը, շարժուձևը, ճանաչել դրանց գործածության ձևերը։	
45	Երկխոսություն, դրա առանձնա-հատկությունները, վարելու կանոնները	1	Կսովորեն տարբեր խոսքային իրավիճակներում մենախոսութ-յունների և երկխոսությունների միջոցով ասելիքը ներկայացնել։	
46	Երկխոսություն, դրա առանձնա-հատկությունները, վարելու կանոնները	1	Կսովորեն վարել երկխոսություն՝ պահպանելով վարելու կանոնները (նայել խոսողի աչքերին, հարցեր տալ, կիրառել բարեկիրթ խոսքի ընդունված լեզվական միջոցները)	
47	Երկխոսություն վարելու կանոնները: Բանավեճ	1	Կսովորեն ստեղծել երկխոսություն։ Կծանոթանան բանավեճի	

			կանոններին:
48	Արձակ ստեղծագործություն	1	Պատկերացում կկազմեն գեղարվեստական խոսքի մասին: Կտարբերեն պատմվածքն ու բանաստեղծությունը:
49	Չափածո ստեղծագործություն	1	Կհորինեն փոքրիկ բանաստեղծություն
50	Գրական հերոսները և նրանց արարքները	1	Կսովորեն ընթերցած նյութի հերոսների արարքների մասին մեկնաբանություններ և բնութագրական աշխատանքներ կատարել:
51	Գրական հերոսները և նրանց արարքները	1	Կհորինեն որևէ տեքստի հերոսի մասին նոր արարք կամ արկած:
52	Ի՞նչ է տեքստը	1	Գաղափար կկազմեն տեքստի մասին Կուսումնասիրեն տարաբնույթ նյութեր և կորոշեն՝ դրանցից որոնք են տեքստեր, որոնք՝ ոչ
53	Տեքստի կառուցվածքային և իմաստային առանձնահատկությունները	1	Կամրակայեն գիտելիքները տեքստի կառուցվածքի մասին Խառը դասավորությամբ նախադասություններից կկազմեն տեքստ
54	Տեքստի կառուցվածքային և իմաստային առանձնահատկությունները	1	Կհամեմատեն 2 տեքստեր, կգտնեն դրանց նմանությունն ու տարբերությունը Կշտկեն տեքստի նախադասությունների խառնված հերթականությունը՝ ուշադրություն դարձնելով տեքստի իմաստին և կվերնագրեն այն

55	Տեքստի սկիզբ, դեպքերի հաջորդականություն, ավարտ	1	Կընթերցեն որևէ տեքստ, կորոշեն սկիզբը, դեպքերի հաջորդականությունը, ավարտը Տրված նախադասությունները վերադասավորելով՝ կստանան տեքստ
56	Տեքստի սկիզբ, դեպքերի հաջորդականություն, ավարտ	1	Կվերլուծեն տեքստի իմաստային և կառուցվածքային առանձնահատկությունները
57	Զրույց. առանձնահատկությունները	1	Կսովորեն տեքստի շուրջ կազմել հարցեր, խմբային աշխատանքի միջոցով կվարեն զրույց տեքստի շուրջ
58	Հասկացություն տեքստի պարբերության մասին	1	Կիմանան որն է տեքստի պարբերությունը
59	Տեքստի պլան	1	Կկազմեն տեքստի պլան, որի հիման վրա կկարողանան գրել փոխադրություն:
60	Տեքստի տեսակները	1	Կճանաչեն տեքստի տեսակները և այն կխմբավորեն
61	Պատմողական տեքստ	1	Կուսումնասիրեն պատմողական տեքստի առանձնահատկությունները: Կկազմեն պատմողական տեքստի նմուշ
62	Նկարագրական տեքստ	1	Կիմանան նկարագրական տեքստի Առանձնահատկությունները:

			Կկազմեն նկարագրական տեքստի նմուշ
63	Գրական հերոս, արարք	**1**	Կկարդան բնագրեր և կառանձնացնեն գրական հերոսին և նրա արարքները
64-68	Գործնական պարապմունքներ ՏՀՏ գործիքների կիրառմամբ։	**5**	Կսովորեն՝ ինչ է մեդիագրագիտությունը, ինչպես օգտվել ՏՀՏ գործիքներից։

-